ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԵԿՆԱՐԿ

27.04.2023 10:51

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 26.04.2023 թվականի թիվ 2/1-Լ որոշմամբ հաստատել է որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցը։

Հանձնաժողովի 26.04.2023թ. որոշումներով հաստատվել (սահմանվել են) են նաև Որակավորման քննությունների գնահատման չափանիշները (2/3-Լ որոշում), ինչպես նաև դիմումների և այլ փաստաթղթերի ձևաթղթերը (2/2-Լ որոշում), որոնց կարող եք ծանոթանալ ՀՀ փաստաբանների պալատի կայքում (www.advocates.am, Պալատ -> Որակավորման հանձնաժողով)։

1. ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած ունկնդիրները 2023 թվականի որակավորման քննություններին մասնակցելու համար դիմումները և անհրաժեշտ փաստաթղթերը կարող են ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատ **2023թ. ապրիլի 26-ից մինչև 2023թ. մայիսի 3-ը** (ներառյալ) ժամը 10.00-ից մինչև ժամը 18.00-ն (աշխատանքային օրերին)։

Փաստաթղթերի ցանկը սահմանված է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման կարգի 30-րդ կետում (www.advocates.am, Պալատ -> Որակավորման հանձնաժողով)։

2. «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձինք 2023 թվականի որակավորման քննություններին մասնակցելու համար դիմումները և անհրաժեշտ փաստաթղթերը կարող են ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատ **2023թ. ապրիլի 26-ից մինչև 2023թ. մայիսի 12-ը (ներառյալ)** ժամը 10.00-ից մինչև ժամը 18.00-ն (աշխատանքային օրերին)։

Փաստաթղթերի ցանկը սահմանված է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման կարգի 31-րդ կամ 32-րդ կետում (www.advocates.am, Պալատ -> Որակավորման հանձնաժողով)։

Բեռնել ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած ունկնդիրների որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցը։

Բեռնել «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձանց որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցը։

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })